

Համաձայնեցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
Վ. Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ  
Գ. Խաչատրյան

31 հուլիս 2012 թ. N 21-Ն

## Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ N 21

**«ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ  
(ՀՕ-152-Ն) ՀԱՄԱՁԱՅՆ «ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ»  
ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ԲԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ԲԴ ՄԱՍԻ 4-ԲԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇԸ ԿՈՐՑՐԱԾ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ պարբերության համաձայն պետական գրանցման վկայականը հարկային մարմին ժամանակավոր հանձնած և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը օրենքով սահմանված չափով նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ պարբերությունը 25.07.2012 թ-ից ուժը կորցրած է ճանաչվելու:

Միաժամանակ, «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի (19.03.2012 թ., ՀՕ-127-Ն) 2-րդ հոդվածի համաձայն անհատ ձեռնարկատեր հաշվառված անձանց պետական հաշվառման վկայականները ուժի մեջ են 25.07.2012 թ-ից հետո՝ 3 ամսվա ընթացքում:

Հաշվի առնելով վերը նշվածը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, **պաշտոնապես պարզաբանում եմ.**

1. Ձեռնարկատիրական գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած և մինչև 24.07.2012 թ. ներառյալ վկայականները հարկային մարմին ժամանակավոր հանձնած անհատ ձեռնարկատերերը նվազագույն սոցիալական վճարներ շարունակում են չկատարել՝ մինչև վկայականը հետ ստանալը կամ գործունեությունը վերսկսելը:

2. Ձեռնարկատիրական գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած անհատ ձեռնարկատերերը 25.07.2012 թ-ից սկսած չեն կարող վկայականները ժամանակավոր հանձնել հարկային մարմին և նվազագույն սոցիալական վճարները պետք է կատարեն օրենքով սահմանված կարգով: Նվազագույն սոցիալական վճարների չկատարման համար հիմք կարող է հանդիսանալ բացառապես գործունեության դադարեցման գրանցումը Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

3. Ձեռնարկատիրական գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած անհատ ձեռնարկատերերի կողմից հարկային մարմին ժամանակավոր հանձնած վկայականները 25.07.2012 թ-ից հետո՝ 3 ամիս անց ուժը կորցրած են ճանաչվում, որը հիմք չէ պետական գրանցամատյանում տվյալ անհատ ձեռնարկատերերի գործունեությունը դադարեցնելու մասին գրառում կատարելու համար: